



«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

Հասարակական կազմակերպության

2010

ՏԱՐԵԿԱՆ
ԶԵԿՈՒՅՑ

Վանաձոր 2011

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ 2010



«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

Հասարակական
կազմակերպության

2010

ՏԱՐԵԿԱՆ
ԶԵԿՈՒՅՑ

ՏԱՐԵԿԱՆ
ԶԵԿՈՒՅՑ

2010

«Խաղաղության երկխոսության» 2010-2012 թթ. ռազմավարությամբ նախատեսվում է Վանաձորում հիմնել երիտասարդների մի խումբ, որում ընդգրկված տղաներն ու աղջիկները սեփական պատասխանատվությունը կզգան իրենց համայնքում, երկրում կամ տարածաշրջանում խաղաղության հասնելու գործում: Գիտակցելով իրենց դերի կարևորությունը՝ նրանք կաշխատեն այնպիսի հասարակության ստեղծման ուղղությամբ, որն իրագեկ է եւ ընդունում է Հայաստանի ներգրավվածությամբ հակամարտությունների ոչ բռնի կարգավորման անհրաժեշտությունը: Նրանք կաշխատեն իրենց հասակակիցների մոբիլիզացման, հակամարտող եւ հետկոնֆլիկտային այլ երկրներից ակտիվ երիտասարդական խմբերի ու հկ-ների միջեւ համագործակցություն ապահովելու ուղղությամբ:

**«Խաղաղության
երկխոսություն»
հասարակական
կազմակերպություն**





ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի ընթերցողներ,

Ստորեւ ձեզ ենք ներկայացնում «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության երկրորդ տարվա գործունեության մասին պատմող զեկույցը: Մեզ համար հաճելի է այն, որ մեր գոյության առաջին իսկ տարում մենք շատ ձեռքբերումների ենք հասել խաղաղասիրության բնագավառում: «Խաղաղության երկխոսություն» անձնակազմն իր ողջ կարողություններն է ներդնում կազմակերպության, առավելագույն ազդեցություն ունենալուն միտված, ռազմավարական նպատակներն իրականացնելու գործում: Հուսով ենք, որ զեկույցը կարդալիս դուք եւս կհամոզվեք, որ «Խաղաղության երկխոսության», այսպէս կոչված, «փոփոխությունների տեսությունն» առավել միտված է արդյունքների եւ ազդեցության, այլ ոչ թե կենտրոնացած ինքնանպատակ գործողությունների վրա: «Խաղաղության երկխոսության» անձնակազմի գործունեությունն անմիջականորեն կապվում է կրթական գործընթացի հետ: Ընդ որում, մենք ոչ միայն մյուսներին շարունակ կրթելու, սովորեցնելու առաքելություն ենք վերապահում մեզ, այլ նաեւ, այդ կրթական գործընթացին զուգընթաց, ինքներս էլ սովորում, ինքնակրթվում ենք՝ շարունակ փորձելով տարաբնույթ հարցեր տալ ինքներս մեզ. «Ինչո՞ւ ենք մենք դա անում: Ի՞նչ ենք ուզում փոխել դրանով: Ի՞նչ է փոխվել, եւ ի՞նչ է փոխվելու»:

Իր առօրյա աշխատանքում հկ-ի անձնակազմը կիրառում է «սովորող համայնքի» (“Learning community”) մեթոդը: Այն է՝ ներառական ու մասնակցային մոտեցման հիման վրա կատարվող փոփոխությունների գործընթաց: «Սովորող համայնքի» գաղափարը համատեղ երկխոսության վրա հիմնված ուսուցողական գործընթաց է, որը ենթադրում է տվյալ դեպքում՝ խաղաղասիրական գործընթացներում ներգրավված թիրախ խմբերի կողմից ձեռք բերված փորձի հետագա տարածումը, արդյունքում՝ նոր դերակատարների ներգրավումն այդ գործընթացներում՝ ըստ իրենց պահանջների, հետաքրքրությունների, նախաձեռնությունների եւ ներուժի:

Ելնելով վերոնշյալից, նախորդ տարվա, մեզ համար ամենաարժեքավոր, ձեռքբերումները յուրացված դասերն էին, մեր կազմակերպության եւ նրանում ներգրավված մարդկանց հաջողությունների մասին փոքրիկ պատմությունները, որոնք մենք այժմ ցանկանում ենք կիսել ձեզ հետ:

*Էդգար Խաչատրյան,
«Խաղաղության երկխոսության» հկ-ի նախագահ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- § Ամփոփում - էջ 7
- § Կազմակերպության նկարագիրը - էջ 13
- § Իրավիճակի վերլուծությունը՝ որպես կազմակերպության գործունեության ելման կետ - էջ 19
- § Հիմնական դերակատարները եւ «Խաղաղության երկխոսության» գործունեության արդյունքում սպասվող ազդեցությունը 2010-2012 թվականներին - էջ 27
- § Ձեռք բերված արդյունքները - էջ 31
- § 2010 թվականին իրականացված գործունեությունը - էջ 37
- § Քաղված դասեր - էջ 47
- § Հաջորդ տարվա համար նախատեսված քայլեր - էջ 53
- § Հավելվածներ - էջ 57



1. ԱՄՓՈՓՈՒՄ

Վերջին 20 տարիների ընթացքում Հարավային Կովկասն աշխարհի ամենաանհանգիստ տարածքներից է: Խորհրդային Միության փլուզումից հետո համեմատաբար փոքրիկ այս տարածքն անընդհատ փորձությունների է ենթարկվում տարբեր էթնո-քաղաքական հակամարտությունների արդյունքում: Այսօր էլ տարածքում տիրող իրավիճակն այնքան անկայուն է, որ անընդհատ զգացվում է նոր բռնությունների ծագման վտանգը: Ժամանակակից Հարավային Կովկասում ամենապայթյունավտանգ հակամարտություններն են Լեռնային Ղարաբաղի, վրաց-օսական, վրաց-աբխազական հակամարտությունները: Չխոսելով արդեն այդ հակամարտությունների լուծման ուղիների բարդության մասին, նշենք միայն, որ այս հակամարտությունների աշխարհաքաղաքական հիմքերի՝ չափից դուրս բարդ լինելու պատճառով, գոյություն ունեն տարբեր պատկերացումներ, տարբեր մեկնաբանություններ են շրջանառվում հակամարտությունների ուղղակի եւ անուղղակի կողմերի վերաբերյալ անգամ:

Հայաստանը, բացի իր բազմաթիվ ներքին խնդիրներից, բազմաթիվ արտաքին քաղաքական խնդիրներ ունի նաեւ իր հարեւան երկրների հետ: Պաշտոնապես խաղաղ հարաբերություններ ունի իր հարեւաններից միայն երկուսի՝ Վրաստանի եւ Իրանի հետ (չնայած Վրաստանի Ջավախքի տարածքում բնակվող հայ բնակչության կողմից բարձրաձայնվող՝ իր իրավունքների սահմանափակման հարցին, ինչը նույնպես էթնո-քաղաքական արմատներ ունի): Իսկ իր արեւելյան հարեւանի՝ Ադրբեջանի հետ հարաբերությունները սրվել են 1980-ականների

վերջերին, Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտության եւ Հայաստանի կողմից նրա անկախ հռչակման արդյունքում: Հարաբերություններն իր արեւմտյան հարեւանի՝ Թուրքիայի հետ երկարատեւ թշնամության հետքն են կրում՝ 20րդ դարի սկզբում Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ իրականացված էթնիկական գտումները, ջարդերը միջազգային հասարակության կողմից որպէս ցեղասպանություն ընդունելուն հայերի հետամուտ լինելու պատճառով: Բացի այդ, Ադրբեջանը եւ նրա հետ եղբայրական համերաշխություն դրսեւորած Թուրքիան, Ղարաբաղյան հակամարտության պատճառով շուրջ 20 տարի տնտեսական շրջափակման մեջ են պահում Հայաստանը:

Բազմաթիվ գործոններ են նպաստում Հայաստանում տիրող անկայունությանը: Մի կողմից՝ չլուծված հակամարտությունն ու շրջափակումը, սոցիալական անկայունությունն ու աղքատությունը, վերջիններիս պատճառով շարունակվող արտագաղթը: Մյուս կողմից՝ տարաբնույթ պատճառներով առկա (քաղաքական անգործություն, համատարած կաշառակերություն, լրատվամիջոցներիօժեւ ժողովրդավարական կառույցների ազատության սահմանափակում եւ այլն), իշխանությունների հանդեպ անվստահության արդյունքում առաջացած եւ առաջացող բազմաթիվ ներքաղաքական խնդիրները: Հարկ է նշել, որ Հայաստանի հարեւանները՝ Հայաստանի հետ հակամարտության մեջ գտնող Ադրբեջանն ու ՌԴ-ի հետ Աբխազիային եւ Հարավային Օսեթիային առնչվող տարածքային խնդիրներ ունեցող Վրաստանը, գրեթե նույն խնդիրների առջեւ են կանգնած:

Չնայած այս հակամարտությունների տարաբնույթ լինելուն, այնուամենայնիվ, աշխարհաքաղաքական առումով դրանք բազմաթիվ նմանություններ ունեն: Օրինակ, միեւնույն աշխարհագրական դիրքը, իրենց զարգացման որոշակի փուլերում (օրինակ՝ ծագման) ունեցած ընդհանրությունները, արտաքին քաղաքականության գործոնները, ինչպես նաեւ, որոշ դեպքերում, հակամարտություններում ներգրավված միջազգային դերակատարներն ու նրանց հետաքրքրությունները:

Իր «Տեսնենք՝ ով ենք մենք, ընտրենք՝ ով ենք ուզում լինել» երկարատեւ ռազմավարության համաձայն՝ «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպությունը Հարավային Կովկասում փոփոխությունների հասնելու սկզբնակետ է համարում.

§ Հակամարտող կողմերից կանանց եւ տղամարդկանց մի խումբ ձեւավորել, զարգացնել նրանց կարողությունները, քաղաքացիական ներուժը: Արդյունքում՝ խմբում ներգրավվածները հանդես կգան որպես հիմնական դերակատարներ փոփոխությունների իրականացման գործընթացում՝ «լռության մշակույթի» (“Culture of silence”) հաղթահարման միջոցով խաղաղասիրական շարժումն առավել ընդլայնելու, բանակցային գործընթացն առավել ժողովրդավարական դարձնելու նպատակով:

§ Հաղթահարել հակամարտող կողմերի մոտ աճող թերահավատությունը՝ դիվանագիտական ճանապարհով հակամարտության կարգավորման հանդեպ, երկու երկրների հասարակություններում օրըստօրե ահագնացող

պատերազմական տրամադրությունները՝ բռնի ելքի դեպքում՝ բոլորի կողմից վճարվելիք թանկ գնի եւ խաղաղ փոխհամաձայնության գալու առավելությունների վերաբերյալ զանազան քննարկումների միջոցով:

§ Նորանոր քաղաքացիների ներգրավման միջոցով, նախաձեռնել համայնքային գործընթաց՝ տարածաշրջանում խաղաղության հասնելու եւ հակամարտությունների խաղաղ կարգավորման նպատակով:

§ Հակամարտող հասարակություններում վերացնել, այսպես կոչված, «ուրիշների» եւ «յուրայինների» վերաբերյալ արմատացած ընկալումները:

§ Քողազերծել «ռազմիկի», «խսկական տղամարդու» կերպարի մասին ունեցած եւ մշտապես պաշտպանության, օգնության կարիք զգացող կանանց մասին գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերը:

§ Խաղաղասիրական գործընթացներում ներգրավված դերակատարների մոտ լրատվամիջոցների աշխատատեղի եւ բազմաթիվ պրոպագանդիստական հնարքների նկատմամբ քննադատական վերաբերմունք ձեւավորել՝ գոյություն ունեցող ռազմական պրոպագանդային դիմակայելու համար:

§ Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, անհատներից, կազմակերպություններից բաղկացած խաղաղասիրական շարժում ձեւավորել՝ իբրեւ հակակշիռ պետական ռազմական ապարատին:





2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«Խաղաղության երկխոսություն» խաղաղասիրական հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2009 թվականին: Գրանցված լինելով Հայաստանում, այն միավորում է անհատների՝ Հայաստանից, Ռուսաստանից, Վրաստանից, Գերմանիայից, Նիդեռլանդներից, ովքեր խաղաղասիրական գործունեությամբ զբաղվելու երկարատեւ փորձ ունեն Կովկասում եւ իրենց սեփական երկրներում, ինչպիսիք են ...

Կազմակերպության առաքելությունն է. աջակցել քաղաքացիական հասարակության ներգրավվածությանը հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացներին՝ ազգային, տարածաշրջանային եւ միջազգային մակարդակներում, նաեւ նպաստել հակամարտող հասարակությունների ներկայացուցիչների միջեւ հարգալից երկխոսության ձեւավորմանը՝ առկա հակամարտությունների խաղաղ կարգավորման եւ նոր բռնությունների կանխման երկարատեւ նպատակով:

Մենք հավատում ենք, որ միայն տարբեր մակարդակներում երկխոսության միջոցով է հնարավոր հասնել խաղաղության: Երկխոսությունն է օգնում մեզ հասկանալ, թե ինչի ենք ձգտում եւ ինչ ենք ուզում փոխել: Երկխոսության միջոցով ենք բարձրաձայնում մեր հետաքրքրությունները, պաշտպանում դրանք,

համաձայնեցնում հետագա քայլերը՝ համատեղ ուժերով խաղաղության հասնելու ուղիներ փնտրելու գործում:

Կազմակերպության տեսլականը, բազմաշերտ երկխոսության ձևավորման միջոցով հասարակության լայն շերտերում ձևավորել հակամարտությունների խաղաղ կարգավորման նկատմամբ անձնական պատասխանատվություն, ձևավորել գիտակցություն, որ իրենք իրավասու են խաղաղություն պահանջել իրենց իշխանություններից:

«Խաղաղության երկխոսությունն» իր գործունեությամբ ձգտում է հակամարտող կողմերի հասարակությունների այն ներկայացուցիչների միջև, ովքեր հավատում են, որ կոնֆլիկտների խաղաղ կարգավորմանն այլընտրանք չկա, ստեղծել փոխհամագործակցության եզրեր՝ միմյանց աջակցելով սեփական երկրներում առավել արդյունավետ գործունեություն ծավալելու համար:

«Խաղաղության երկխոսության» ռազմավարական 4 հիմնական ուղղություններն են.

- § *Քաղաքացիական խաղաղասիրական ներուժի զարգացում,*
- § *Մարդու իրավունքների եւ դեմոկրատական արժեքների նկատմամբ հարգանքի պատվաստում,*
- § *Օժանդակություն՝ խաղաղասիրական քաղաքացիական նախաձեռնություններին,*
- § *Հակամարտությունների արդյունքում տուժածների շահերի պաշտպանություն*

Հավատացած ենք, որ կայուն խաղաղության պահպանումը պահանջում է հասարակության յուրաքանչյուր անդամի հավասար մասնակցությունն այդ գործին: Կազմակերպության ռազմավարական նպատակներից են գենդերային գործոնի հաշվի առնվելը խաղաղասիրական աշխատանքների մեջ, կանանց դերի բարձրացումն ու նրանց մասնակցության ապահովումը պատասխանատու որոշումների կայացման գործում:

Խաղաղության գաղափարը քարացած հասկացություն չէ, Ճիշտ հակառակը: Խաղաղասիրական գործընթացն էլ իր հերթին դինամիկ հասարակական ու քաղաքական գործընթաց է՝ հիմնված հասարակության փոփոխվող պահանջումների վրա: Կանանց ու տղամարդկանց ակնկալիքները, հասարակական գործընթացներից սպասումները տարբերվում են իրարից՝ կախված հասարակությունում ունեցած իրենց տարբեր դերերից: Հետեւաբար, խաղաղասիրական գործընթացում այս գենդերային խմբերից որեւէ մեկի հետաքրքրությունների անտեսումն այս պրոցեսը թերի եւ ոչ ամբողջական է դարձնում: Այդ է մեր այն համոզվածության պատճառը, որ գենդերային պահանջների ինտեգրման կարելի է հասնել միայն խաղաղասիրական գործընթացում կանանց ու տղամարդկանց հավասար մասնակցությամբ:

Իր գոյության կարճ ժամանակահատվածում կազմակերպության՝ Վանաձորում գտնվող գրասենյակը համախմբել է համայնքի ակտիվ երիտասարդ առաջնորդների, ովքեր արդեն իսկ որոշակի փորձ ունեն խաղաղասիրության բնագավառում: Կազմակերպության անձնակազմն այժմ բաղկացած է ծրագրի

կառավարման, բախումնաբանության, մոնիտորինգի եւ գնահատման, լրագրողական հմտություններ ունեցող անդամներից: Դեռ նախքան կազմակերպության հիմնադրումը նրանք ակտիվորեն ներգրավված են եղել համայնքի գործունեության մեջ՝ ամենատարբեր բնագավառներում, քաղաքացիական հասարակության զարգացմանն ու հակամարտությունների կարգավորմանն ուղղված ծրագրերում:

«Խաղաղության երկխոսությունն» ունի 5 հոգուց բաղկացած անձնակազմ եւ 4 կամավոր, որոնք ցանկություն ունեն եւ պատրաստակամ են կոտրել «լռության մշակույթն» ու գոյություն ունեցող միլիտարիստական եւ ազգայնական պրոպագանդան, կրկին՝ երկխոսության եւ հասարակության հետ փոխուսուցման միջոցով:





3. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵԼՄԱՆ ԿԵՏ

Բանակցային գործընթացի ազդեցությունները ներքին քաղաքականության, գենդերային հարցերի եւ հասարակական կյանքի վրա: Չնայած դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված պետական բանակցություններն (Մինսկի գործընթաց) ընթացքի մեջ են, սակայն ներկայումս դրանք, կարծես, փակուղի են մտել. հակամարտության վերսկսման իրական վտանգ է զգացվում: Հայկական եւ ադրբեջանական իշխանական էլիտան է բանակցություններ վարում, ինչը նշանակում է, որ նրանք լիովին հաշվետու են կարգավորման արդյունքների համար, լինեն դրանք բացասական, թե դրական: Նրանք խոստանում են բնակչությանը հակամարտության առավելագույնս դրական լուծում՝ դրանով մեծացնելով վտանգը՝ հասարակության կողմից կատաղի ընդդիմության հանդիպելու, եթե նրանք երբեւէ փոխզիջումների գնան: Երկրների ղեկավարներն օգտագործում են չլուծված հակամարտության գործոնն ու պատերազմական գործողությունների վերսկսման վտանգը՝ ներքին խնդիրներից հասարակության ուշադրությունը շեղելու համար: Ընդդիմադիր ուժերը եւս միեւնույն փաստերն օգտագործում են իշխանությունների դեմ պայքարելու իրենց գործում՝ անգամ ավելի անհաշտ ազգայնասերի կեցվածք ընդունելով: Եւ այս ամենը՝ համատեքստում, երբ հակամարտության՝ երկար

տարիներ կարգավորված չլինելու պատճառով գրեթե ամեն օր երիտասարդ զինվորներ են վիրավորվում կամ զոհվում սահմանագծին:

Վերջին 15 տարիների ընթացող բանակցությունների անարդյունավետության արդյունքում հասարակ մարդկանց մոտ հետզհետե ավելի ու ավելի է նվազում հավատը, որ հակամարտությունը հնարավոր է կարգավորել խաղաղ, դիվանագիտական ճանապարհով: Հայաստանում քաղաքացիական խաղաղասիրական փոքրաթիվ նախաձեռնությունները կենտրոնացված են մայրաքաղաք Երևանում: Մարզերի բնակչությունը, նրա պահանջմունքները կարծես անտեսված են մնում: Խաղաղասիրական գործունեության ու դրա զարգացման գործում քաղաքացիական հասարակությանը պասիվ դերակատարում է վերապահված: Հայաստանյան ընդդիմադիր ուժերին աջակցող շատ հասարակական կառույցներ անգամ կողմ են նրանց՝ հակամարտությանը վերաբերող ազգայնական մոտեցումներին, կրկին անգամ օգտագործելով դարաբաղյան հիմնախնդիրը որպես գործիք՝ առկա ռեժիմի դեմ պայքարելու համար:

Ռազմական բնագավառում կատարված խոշոր ներդրումներն ավելի են ամրապնդում պատրանքը, որ հակամարտությունը կարող է կարգավորվել զինված գործողությունների միջոցով: Ռազմական պրոպագանդան մեծ ազդեցություն է ունենում երիտասարդ սերնդի վրա, որը երբեք հակառակորդ կողմի ներկայացուցիչների հետ անմիջական շփման հնարավորություն չի ունեցել: Արդյունքում՝ ուժգնացող քարոզչությունն է ձեւավորում երիտասարդ

սերնդի ընդհանուր աշխարհայացքը, արմատացնում թշնամու կերպարը: Մինչ այդ իրենց մշտապես «գոհ», հալածյալ ազգ ներկայացնող հայերի մոտ (սկսած ցեղասպանությունից, արտաքին թշնամիների մշտական ասպատակություններից մինչև բնական աղետներ) պատկերացումները փոքր-ինչ փոխվեցին: Ղարաբաղյան պատերազմում հաղթելու արդյունքում ձեռք բերած հաղթողի հոգեբանությունը շատերին տեղիք է տալիս մտածելու, որ նոր պատերազմում եւս անպայման հաղթանակի կհասնեն: Կան նաեւ մարդիկ, ովքեր գտնում են. «Մեր որդիներն են զոհվել Ղարաբաղում, եւ թշնամուն վերադարձնելու հող չունենք: Զոհ լինելու ժամանակն այլեւս ետեւում է, Հայաստանն այժմ «հաղթող» երկիր է»: Արդյունքում՝ երբեք պատերազմ չտեսած երիտասարդությունը հասակ է առնում՝ լսելով Ղարաբաղյան պատերազմի հերոսների, նրանց սխրանքների մասին, դաստիարակվում նրանց օրինակով՝ այսպիսով հեշտ թիրախ դառնալով ռազմական մեքենայի համար: Այս պնդումն ավելի ակնառու է դառնում կանանց եւ տղամարդկանց՝ հասարակության մեջ ունեցած հասարակական դերերի տեսանկյունից դիտարկելիս: Տղամարդուն հայ հասարակության մեջ հիմնականում ընտանիքի մասին հոգ տանողի ու պաշտպանի դերն է վերապահված: Հետեւաբար, հասարակությունը պահանջում է նրանցից համապատասխանել տրված կերպարին: Սակայն, ինչպես վերելում խոսվեց, տնտեսական-սոցիալական մի շարք պայմաններ թույլ չեն տալիս տղամարդկանց պատվով կատարել այդ դերը: Առաջացած հակասության պատճառով տղամարդիկ հեշտ թիրախ են դառնում զինվորական հավաքագրման համար, քանի որ երբեմն դա միակ հնարավորությունն է իրենց

սոցիալական վիճակը բարելավելու ու հասարակությանն ապացուցելու, որ իրենք բավականաչափ ուժեղ եւ ի վիճակի են լինելու արժանի գավակ, ընտանիքի հայր: Կանանց՝ թույլ, պաշտպանված լինելու կարիք ունեցող էակների ավանդական դերի ու կերպարի պատճառով էլ կանայք ողջունում են տղամարդկանց՝ պաշտպան ու հերոս լինելու ձգտումը:

Վանաձոր. տեղային ազդեցություն: 1994-ի հրադադարից մինչ այժմ Վանաձորն, ինչպես Հայաստանի մյուս քաղաքներն ու գյուղերը, կրել է վեր նկարագրված իրավիճակի հետեւանքները: Իրավիճակն առավել սրվեց Խորհրդային Միության փլուզումից, 1988 թվականի՝ Հյուսիսային Հայաստանի ենթակառուցվածքների մեծ մասը կործանած, իր մեծությամբ եւ նշանակությամբ ՀՀ երկրորդ քաղաքը՝ Գյումրին գրեթե ամբողջովին ավերած, այդ թվում՝ Վանաձորին էլ մեծ վնաս հասցրած եւ ատոմային էլեկտրակայանի փակման անհրաժեշտությունն առաջացրած Սպիտակի երկրաշարժից հետո: Բացի այդ, Թուրքիան եւ Ադրբեջանն սկսեցին շրջափակել Հայաստանը՝ կաթվածահար անելով երկրի տնտեսությունը, զրկելով էլեկտրականությունից ու գազից: Դեռ այսօր էլ շատերը տառապում են պատերազմի կամ երկրաշարժի հասցրած հոգեբանական վնասվածքներից, բնակչության մի մասն ապրում է ժամանակավոր կացարաններում: Մասնավորապես, Վանաձորում փակվել են խորհրդային ժամանակաշրջանի հսկա գործարանները՝ Վանաձորի բնակչության մեծամասնությանն առանց աշխատանքի թողնելով: Ոմանք դեռ հույս են փայփայում, որ արտադրական ձեռնարկությունները մի օր կվերաբացվեն՝ ապահովելով բոլորին աշխատանքով: Իսկ մինչ այդ, հայ ընտանիքների

մեծամասնությունը կարողանում է գոյատևել միայն շնորհիվ Սփյուռքի, արտերկրում աշխատող հարազատների դրամական օժանդակության:

Ամփոփելով վերը նշվածը, կարելի է ամփոփել. վանաձորաբնակ երիտասարդների մեծամասնությունն անտարբեր է բանակցային գործընթացի հանդեպ: Նրանք երբեւէ անձամբ չեն առնչվել պատերազմի դժվարություններին, իրենց համարում են հաղթող կողմ եւ հավատում են, որ նոր պատերազմի դեպքում Հայաստանը կրկին կհաղթի: Այս է պատճառը, որ նրանք շատ քիչ դեպքերում են դեմ միլիտարիզացիային, իսկ հակամարտությունն ընկալում են իրենց սեփական իրականությունից շատ հեռու ինչ-որ իրավիճակ:

Երիտասարդները հավատացած են, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը քաղաքական գործիչների, ոչ թե իրենց լուծելու խնդիրն է, եւ չեն գիտակցում հակամարտությունների ոչ բռնի կարգավորման գործում հասարակության ներգրավված լինելու ողջ կարեւորությունը: Նրանցից շատերն աշխատանք գտնելու, ինքնարտահայտման եւ ժամանցի քիչ հնարավորություններ ունեն, անգամ՝ հասարակության մեջ անօգտակար են զգում իրենց: Որպես հետեւանք՝ պետական եւ ռազմական քարոզչության ճնշման տակ շատ երիտասարդներ համալրում են բանակի շարքերը, միանում են ազգայնական ուղղվածություն ունեցող շարժումների՝ ամեն գնով հաղթանակը պահպանելու նպատակով:

Վերը նշված բոլոր մարտահրավերներն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում հակամարտությունների խաղաղ կարգավորման ուղղությամբ աշխատանքներ տանող «Խաղաղության երկխոսության» գործունեության վրա:

Երբեմն գրեթե անհնար է թվում դիմակայել Հայաստանում գոյություն ունեցող ազգայնական ու ռազմական ուժեղ պրոպագանդային: «Խաղաղության երկխոսության» եւ նմանատիպ այլ կազմակերպությունների գործունեությունը հասարակության կողմից ընկալվում է որպես ժամանակի վատնում, կամ վատագույն դեպքում դա կարող է համարվել դավաճանական գործողություն Հայրենիքի, ոտնձգություն՝ Լեռնային Ղարաբաղի անկախության նկատմամբ:





4. ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ ԵՒ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՊԱՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 2010-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում (2010 թվականին) «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից իրականացված գործունեության մեջ ներգրավված հիմնական դերակատարների խումբը բաղկացած էր հկ-ի անձնակազմից եւ վանաձորցի 18-30 տարեկան երիտասարդ առաջնորդներից, որոնք որոշակի ազդեցություններ ունեն համայնքային ամենատարբեր խմբերի վրա՝ ուսանողներ, դպրոցականներ, երիտասարդական եւ արվեստի ակումբների անդամներ, լրագրողներ, հկ-ների ներկայացուցիչներ:

«Խաղաղության երկխոսության» 2010-2012 թթ. ռազմավարությամբ նախատեսվում է Վանաձորում հիմնել երիտասարդների մի խումբ, որում ընդգրկված տղաներն ու աղջիկները սեփական պատասխանատվությունը կզգան իրենց համայնքում, երկրում կամ տարածաշրջանում խաղաղության հասնելու գործում: Գիտակցելով իրենց դերի կարեւորությունը՝ նրանք կաշխատեն այնպիսի հասարակության ստեղծման ուղղությամբ, որն իրազեկ է եւ ընդունում է Հայաստանի ներգրավվածությամբ հակամարտությունների ոչ բռնի կարգավորման անհրաժեշտությունը: Նրանք կաշխատեն իրենց հասակակիցների մոբիլիզացման, հակամարտող եւ հետկոնֆլիկտային այլ

երկրներից ակտիվ երիտասարդական խմբերի ու հյ-ների միջև
համագործակցություն ապահովելու ուղղությամբ:

Մտադիր ենք փոփոխություններն սկսել համայնքային մակարդակից՝ մեր
գերմանական, ավստրիական, ֆիննական, նիդեռլանդական գործընկերների
աջակցությամբ հետզհետե ավելի ընդլայնելով աշխարհագրությունը. Կովկաս,
Բալկանյան հետկոնֆլիկտային տարածաշրջաններ եւ այլն:

**Ձգտում ենք հասնել հետեւյալ փոփոխություններին Հայաստանում,
մասնավորապես՝ Վանաձորում.**

§ «Խաղաղության երկխոսությունը» յուրօրինակ կենտրոն կհանդիսանա
համայնքի ստեղծագործող երիտասարդների ինքնաարտահայտման համար:
Նրանց, ովքեր ձգտում են կոտրել «լռության մշակույթն» ու Հայաստանում
առկա ռազմական ու ազգայնական պրոպագանդան: Կազմակերպությունում
ներգրավված երիտասարդները նորանոր թարմ ու ստեղծագործ
գաղափարներով հանդես կգան, ինչի արդյունքում ավելի հաջողված կլինի
կազմակերպության հասարակական գործունեությունը:

§ Երիտասարդական խումբը կաշխատի այնպիսի հասարակություն ստեղծելու
ուղղությամբ, որն ընդունում է Հայաստանի կոնֆլիկտների ոչ բռնի
կարգավորման անհրաժեշտությունը: Նրանք կփորձեն ոգեւորել եւ ներգրավել
իրենց մյուս հասակակիցներին՝ համալսարաններում, դպրոցներում,
երիտասարդական եւ արվեստի կենտրոններում, ինչպես նաեւ լրատվական
կազմակերպություններին եւ Հայաստանի հասարակական

կազմակերպություններին՝ խաղաղասիրական գործունեություն ծավալել ըստ իրենց հետաքրքրությունների:

§ Երիտասարդական խմբի գործունեության արդյունքում կստեղծվեն ուսանողներից, դպրոցականներից, երիտասարդական եւ արվեստի ակումբների ներկայացուցիչներից, երիտասարդ լրագրողներից ու հկ ներկայացուցիչներից բաղկացած խմբեր, որոնք եւս գիտակցում են հակամարտության լուծված չլինելու կամ բռնությունների ուժգնացման արժեքը եւ գիտեն հակամարտությունների խաղաղ կարգավորման գործում իրենց դերի կարեւորությունն ու իրենց պատասխանատվությունը: Նրանք հմտություններ ձեռք կբերեն քննադատորեն վերլուծելու համար լրատվամիջոցների աշխատանքն ու հնարավորություն կունենան զերծ մնալու ռազմական եւ ազգայնական պրոպագանդայի ազդեցություններից: Հարկ է, որ խմբերը բավականաչափ ուժեղ լինեն, եւ որոշում կայացնողներն ընկալեն նրանց որպես կարեւոր դերակատարներ, պարբերաբար ներգրավեն նրանց Հայաստանի կոնֆլիկտների խաղաղ կարգավորմանն ուղղված քննարկումների մեջ:

§ Անչափ կարեւոր է երկխոսություն ձեւավորել համայնքի երիտասարդ անդամների ու քաղաքացիական հասարակության դերակատարների միջեւ, հասարակական կազմակերպություններում ներգրավել հնարավորինս մեծ թվով երիտասարդ դերակատարների, որպեսզի նրանք հնարավորություն ունենան կիսվել իրենց փորձով՝ երիտասարդական այս նախաձեռնության համար բնականոն սերնդափոխությունն ապահովելու համար:



5. ՉԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2010 թվականի իր գործունեության ընթացքում «Խաղաղության երկխոսությունն» իր չորս ռազմավարական ուղղություններում ունեցել է հետևյալ ձեռքբերումները.

Քաղաքացիական խաղաղասիրական ներուժի զարգացման բնագավառում

§ Հակամարտություններ ունեցող երկրներից ու տարածաշրջաններից մի քանի խումբ երիտասարդների համար երկխոսության եւ համագործակցության հնարավորություն է ստեղծվել հկ-ի կամ նրա գործընկերների կողմից կովկասյան ու Եվրոպական մի շարք երկրներում անցկացված դասընթացների ու սեմինարների միջոցով:

§ «Խաղաղության երկխոսության» ու նրա գործընկերների կողմից իրականացված խաղաղասիրական կրթական գործունեության արդյունքում հմտություններ ձեռք բերած, կովկասյան երկրներից ներգրավված երիտասարդներն ու նրանց հասակակիցները Եվրոպայում մշակել եւ իրականացնում են համատեղ եւ առանձին ծրագրեր, որոնք նպատակաուղղված են խաղաղության կառուցմանն ու կոնֆլիկտների ոչ բռնի փոխակերպմանը:

§ Շնորհիվ «Խաղաղության երկխոսության» կողմից իրականացված, լրատվամիջոցների աշխատատեղի եւ զանազան մեդիա հնարքների վերլուծությանն ուղղած գործունեության արդյունքում Վանաձորում 20 երիտասարդներից բաղկացած խմբի մոտ Հայաստանում լրատվամիջոցների աշխատանքի վերաբերյալ քննադատական վերլուծության համար անհրաժեշտ կարողություններ են զարգացվել:

Քաղաքացիական խաղաղասիրական նախաձեռնությունների խթանում

- § Լոռու մարզի Վանաձոր եւ Սպիտակ քաղաքների հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները մասնակցեցին հայ-թուրքական հարաբերություններին առնչվող հանրային քննարկումներին, որը կազմակերպվեց «Պատերազմի եւ խաղաղության լուսաբանման ինստիտուտի» (IWPR) հետ համատեղ:
- § Որպես հետեւանք «Խաղաղության երկխոսության» Վանաձորում իրականացրած ակտիվ գործունեության (մասնավորապես՝ «Մեկ օր ընկերներիս հետ» ծրագրի շրջանակներում իրականացված աշխատանքների), մի քանի երիտասարդական ստեղծագործ խմբեր եւ անհատներ հանդես եկան արդեն իրենց սեփական նախաձեռնություններով: Կազմակերպվեցին դասընթացներ, աշխատանքային քննարկումներ, հիփ հոփ եւ ռոք համերգներ,

պատրաստվեցին երաժշտական տեսահոլովակներ եւ երաժշտական
ալբոմներ:

- § Ավելի քան 20 վանաձորցի երիտասարդ «Խաղաղության երկխոսության»
ծրագրերին մասնակցելու պատրաստակամություն է արտահայտել, իսկ շուրջ
80-նն էլ տեղեկացված են կազմակերպության գործունեությանն ու
հետաքրքրված են դրանով:
- «Մեկ օր ընկերներիս հետ» լուսանկարչական մրցույթին մասնակցելով՝
Վանաձորի երիտասարդությունը լուսանկարն օգտագործեց որպես
վերլուծական գործիք՝ իր առօրյա կյանքը, խնդիրներն ու հոգսերն այդ կերպ
արտահայտելու համար: Լուսանկարչական ցուցահանդեսներ եղան
Վանաձորում եւ, մի քանի անգամ, Գերմանիայում՝ Բեռլինում. գերմանացի
երիտասարդները եւս հնարավորություն ստացան իրենց աչքով տեսնելու
վանաձորցի հասակակիցների առօրյան եւ մտահոգությունները: Նրանք
նախատեսում են նաեւ ծրագրի շարունակությամբ իրենց պատմություններն
ու լուսանկարները ներկայացնել Կովկասի, Եվրոպայի եւ Լատինական
Ամերիկայի իրենց հասակակիցներին:

Մարդու իրավունքների եւ դեմոկրատական արժեքների հանդեպ հարզանքի ձեւավորում

- § Գերմանական OWEN հկ-ի եւ «Հենրիխ Բյոլի» հիմնադրամի կողմից
կազմակերպված համագումարներին «Խաղաղության երկխոսությունը»

հրավիրվել է որպես ՕՄՆԻԲՈՒՍ 1325 միջազգային խաղաղասիրական ցանցի անդամ: Համագումարների ընթացքում միջազգային կազմակերպություններին, եվրոպական տարբեր երկրների քաղաքական գործիչներին ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին են ներկայացվել ՄԱԿ-ի 1325 բանաձևի իրականացման վերլուծությունը, Հայաստանում եւ Կովկասում խաղաղասիրական ու գենդերային հարցերի բնագավառում աշխատողներին հանդիպող խոչընդոտներն ու հաջողությունները:

§ Վանաձորի բնակիչները ՄԻԳ հեռուստաընկերության միջոցով իրազեկվել են գենդերային հարցերի եւ մարդու իրավունքների ու ժողովրդավարության հետ դրանց կապի մասին, ինչպես նաեւ Հայաստանում գենդերային հիմնախնդիրների՝ քաղաքացիական հասարակության վրա ունեցած ազդեցության մասին: Հեռուստատեսության ուղիղ եթերով ներկայացվել է «Խաղաղության երկխոսության»՝ այս ուղղությամբ կատարած գործունեությունը:

§ «Խաղաղության երկխոսությունն» ու իր գերմանական գործընկեր OWEN հասարակական կազմակերպությունը, Կովկասում, Գերմանիայում երիտասարդության, խաղաղասիրության եւ գենդերի բնագավառում աշխատող ՕՄՆԻԲՈՒՍ 1325 ցանցի անդամների եւ Բոսնիա-Հերցեգովինայում գործող կազմակերպությունների միջեւ ուղղակի երկխոսություն ձեւավորելով, հնարավորություն են ստեղծել նրանց համար՝ հետագա համագործակցության ծրագրեր մշակելու:

Հակամարտություններից տուժածների շահերի պաշտպանություն

§ «Խաղաղության երկխոսության» աշխատակից Վահագն Անտոնյանի եւ նրա ադրբեջանցի գործընկեր Ասեֆ Գուլիեւի կողմից նկարահանված «Ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» ֆիլմի դիտում-քննարկումներ կազմակերպելու միջոցով Վանաձորի երիտասարդների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների տարբեր խմբեր տեղեկացվել են տեղի հասարակ ժողովրդի կյանքի վրա Լեռնային Ղարաբաղի պատերազմի ունեցած ազդեցության մասին:



6. 2010 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիական խաղաղասիրական ներուժի զարգացում.

Այս ռազմավարական ուղղությունը միտված է մարդկանց հզորացնելուն, որպեսզի նրանք դառնան վճռորոշ դերակատարներ խաղաղասիրական գործընթացներում:

«Հարավային Կովկասի երիտասարդների՝ հակամարտությունների խաղաղ կարգավորման գործում ունեցած դերը. մասնակիցների հնարավորությունները» թեմայով սեմինար (Մայիսի 1-2, 2010)

Վրաստանի Քուրախի քաղաքում անցկացված սեմինարի նպատակն էր՝ առավել ակտիվորեն ներգրավել Հարավային Կովկասի հակամարտություններում ընդգրկված երկրների երիտասարդներին խաղաղասիրական գործընթացներում: Այն կազմակերպվել էր վրացական «Սուխումի» հիմնադրամի, «Խաղաղության երկխոսության», Հայաստանում գործող «Կանայք՝ հանուն զարգացման» եւ ադրբեջանական «Լուռ աշխարհ» հկ-ների համագործակցությամբ: Տես ավելին.

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=274&TopicId=4&Language=Arm

Միջազգային դասընթաց. “Connecting Peace – Connecting Active Non-violence” (Օգոստոսի 30- սեպտեմբերի 5, 2010)

«Խաղաղության երկխոսության» եւ ռումինական PATRIR-ի հետ համատեղ ավստրիական IFOR-ի կողմից կազմակերպված միջազգային այս դասընթացի նպատակն էր ի մի բերել հասարակական կազմակերպությունների երիտասարդ ներկայացուցիչներ՝ Ավստրիայից, Բոսնիա եւ Հերցեգովինայից, Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից, Հունգարիայից, Իտալիայից, Մոլդովայից, Ռումինիայից, Խորվաթիայից, Սերբիայից, Վրաստանից եւ Հայաստանից: Խաղաղասիրական գործունեություն ծավալող այս երիտասարդներին հնարավորություն տրվեց ծանոթանալու

վերոնշյալ երկրների մասնակցությամբ հակամարտություններին, հետագայում՝ հանդես գալու համատեղ խաղաղասիրական գաղափարներով: Տես ավելին.

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=311&TopicId=4&Language=Arm

«Մեդիադերեր» (Մեպտեմբերի 18-19, 2010)

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության կողմից անցկացված, «Մեդիադերեր» խորագիրը կրող աշխատանքային քննարկման նպատակն էր՝ բացահայտել մերօրյա հասարակական լրատվամիջոցների ազդեցությունը քաղաքացիների՝ իրենց իսկ սոցիալական դերերի ընկալման վրա եւ ցույց տալ, թե ինչպես են երիտասարդները դառնում այդ ազդեցության կրողները: Քննարկումն անցկացվեց կազմակերպության «Տեսնենք՝ ով ենք մենք, ընտրենք՝ ով ենք ուզում լինել» երկարաժամկետ ռազմավարության շրջանակներում: Տես ավելին.

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=313&TopicId=4&Language=Arm

«Հակամարտության ազդեցությունը հասարակության մեջ եւ ընտանիքում բռնությունների աճի վրա», քննարկում (Նոյեմբերի 26-27, 2010)

Նպատակը՝ պարզել մասնակիցների ընկալումներն ու վերաբերմունքն իրենց հասարակություններում առկա բռնությունների եւ դրանց դրսեւորումների վերաբերյալ եւ համատեղ ջանքերով մշակել բռնության կանխարգելմանն ուղղված հնարավոր գործողություններ: Միջոցառումը կազմակերպվել է անց էր կացվում Վրաստանում գործող «Սուխումի» հիմնադրամի կողմից՝ «Խաղաղության երկխոսության», Գյումրիի «Կանայք՝ հանուն զարգացման» եւ Բաքվի «Լուռ աշխարհ» հասարակական կազմակերպությունների աջակցությամբ: Առավել մանրամասն՝ տես.

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=324&TopicId=4&Language=Arm

«Երիտասարդ լիդերները՝ հանուն խաղաղության» ծրագիր (Նոյեմբեր 2010 -դեկտեմբեր 2011)

Հարավային Կովկասից՝ «Խաղաղության երկխոսությանը» ներգրավելով, Ֆիննական CMI կազմակերպության կողմից իրականացվող այս ծրագիրը հիմնադրել է Եվրոհանձնաժողովը:

Նպատակ ունի քաջալերել եւ աջակցել երիտասարդների՝ Հայաստանից, Ադրբեջանից եւ Լեռնային Ղարաբաղից, դառնալ առավել ակտիվ դերակատարներ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործում: Ծրագիրը շարունակական է եւ կշարունակվի նաեւ 2012 թվականին: Ավելին.

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=326&TopicId=4&Language=Arm

Քննարկումների շարք՝ «Անգլերենի ակումբում» (Նոյեմբեր – դեկտեմբեր, 2010)

Ակումբի հանդիպումները մեկնարկել են 2010 թվականի նոյեմբերից եւ նպատակ են հետապնդում զանազան արդիական թեմաների շուրջ (ինչպիսիք են, օրինակ, ընտանեկան բռնությունները, գենդերային իրավահավասարությունը, երիտասարդության դերը քաղաքական զարգացումներում, եւ այլն), քննարկումների միջոցով զարգացնել կազմակերպության անդամների եւ կամավորների՝ անգլերեն լեզվով հաղորդակցվելու կարողությունները: Ավելին՝

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=321&TopicId=4&Language=Arm

Խաղաղասիրական նախաձեռնությունների աջակցություն

Այս ռազմավարական ուղղության նպատակն է աջակցություն ցուցաբերել հասարակության այս կամ այն շերտի կողմից նախաձեռնվող խաղաղասիրական նախաձեռնություններին, համապատասխան պայմաններ ստեղծել դրանց իրականացման համար՝ որպես մեր ներդրումը:

«Խաղաղության լեռներ» ծրագիր (Հոկտեմբեր, 2009 - հոկտեմբեր, 2010)

www.mountainsofpeace.org / www.gorymira.org կայքէջը նիդեռլանդական IKV Pax Christi կազմակերպության ծրագրն է: Կայքէջի հիմնական ուղղվածությունը կլինի Լեռնային Ղարաբաղի եւ վրաց-օսական հակամարտությունների լուսաբանումը, որոնց խաղաղ կարգավորման ուղղությամբ գործունեություն է ծավալում IKV Pax Christi-ն: Կայքէջի գործարկման նպատակներն են՝ Լեռնային Ղարաբաղի եւ վրաց-օսական հակամարտությունների վերաբերյալ տեսակետների

և գաղափարների փոխանակման խթանումը ապահով է հարգալից պայմաններում, հակամարտող կողմերի հասարակությունների ներկայացուցիչներին վիրտուալ հանդիպումների անցկացման հնարավորության ընձեռումը, ինչպես նաև տարածաշրջանի և արտաքին աշխարհի միջև կապերի ապահովումն ու հզորացումը www.mountainsofpeace.org

Հասարակական քննարկում Մպիտակում՝ «Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական փոփոխությունները և հայ-թուրքական հարաբերությունների վերջին զարգացումները» թեմայով (Փետրվարի 26, 2010)

Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի հայաստանյան մասնաճյուղի կողմից նախաձեռնված միջոցառումը, որն իրականացվեց վանաձորյան «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության աջակցությամբ, միտված էր ապակենտրոնացնելու Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ քննարկումների «երեւանյան մենաշնորհը», բարձրացնելու մարզերում բնակվող հասարակության մասնակցությունը հայ-թուրքական հարաբերությունների բարելավմանն ուղղված հասարակական և քաղաքական գործընթացներում, լսելի դարձնելու մարզերի բնակչության ձայնն այս հարցի վերաբերյալ որոշումների կայացման գործում: Առավել մանրամասն՝

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=255&TopicId=6&Language=Arm

«Տեսնենք՝ ով էնք մենք, ընտրենք՝ ով էնք ուզում լինել». աշխատանքային քննարկում (Մայիսի 18, 2010)

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ վանաձորում կազմակերպված «Տեսնենք՝ ով էնք մենք, ընտրենք՝ ով էնք ուզում լինել» թեմայով աշխատանքային քննարկումը հկ-ի համանուն եռամյա ծրագրի առաջին քայլը հանդիսացավ: Հանդիպման ընթացքում մասնակից երիտասարդների համար հնարավորություն ստեղծվեց քննարկելու, թե կանանց և տղամարդկանց դերերի ինչպիսի կարծրատիպային ընկալումներ են շրջանառվում վանաձորյան հասարակության մեջ, ինչպիսին են նրանք տեսնում իրենց հասարակական դերերը, իրենց շրջապատողներն ինչ դերեր են վերագրում իրենց և, վերջապես,

ինչպիսի դեր կցանկանային իրենք ստանձնել: Ավելին.

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=276&TopicId=6&Language=Arm

«Մեկ օր ընկերներին հետ» ծրագիր (Հուլիս-հոկտեմբեր, 2010)

Ծրագիրն ուղղված էր վանաձորցի երիտասարդներին խաղաղասիրական գործունեության շուրջ համախմբելուն և նպատակ ուներ լուսանկարների միջոցով ծանոթանալ երիտասարդների հետաքրքրությունների և համայնքում առկա խնդիրների վերաբերյալ նրանց ընկալումներին, հնարավորություն ընձեռել նրանց ստեղծագործ ինքնարտահայտման համար, իսկ հետագայում՝ ընդգրկվել «Խաղաղության երկխոսության» աշխատանքներում: Ծրագրի շարունակությունը եղավ այն, որ լուսանկարչական ցուցահանդեսը, Վանաձորի Հովհ. Աբեյանի անվան պետ. դրամատիկական թատրոնում ցուցադրվելուց հետո, ներկայացվեց նաև Բեռլինում, որպեսզի վանաձորցի երիտասարդների մտահոգություններին ծանոթանան նաև ծրագրի իրականացմանն աջակցած գերմանացիները: Ավելին՝

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=297&TopicId=6&Language=Arm;

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=315&TopicId=6&Language=Arm;

<http://vimeo.com/16470216>

Երեւան-Վանաձոր. «Ազատության քննարկում» (Նոյեմբերի 6 և 13, 2010)

Ազատության գաղափարի քննարկման նկատակով հանդիպումները հնարավորություն էին մի խումբ մարդկանց համար՝ միմյանց հետ կիսելու ազատության վերաբերյալ իրենց ունեցած ընկալումներն ու մեկ անգամ եւս խորապես մտորելու դրա շուրջ: Ինչպես նաև լավ հնարավորություն էր ազատության ձգտող մարդկանց համար ծանոթանալու միմյանց հետ: Մանրամասներն՝ այստեղ.

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=318&TopicId=6&Language=Arm

Մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների հանդեպ հարգանքի ձեւավորում

Այս ռազամավարական ուղղությունը նպատակ ունի աջակցել այնպիսի հասարակության կառուցմանը, որում հարգվում են մարդու իրավունքները, և ընդունվում դեմոկրատական արժեքները:

«Մենք ընտրում ենք զենդերը. ՄԱԿ-ի 1325 բանաձեւի 10-ամյակը՝ հետադարձ հայացք, մարտահրավերներ և հեռանկարներ» միջազգային համաժողով (Մարտի 24-26, 2010)

Մարտի 24-26-ին «Խաղաղության երկխոսության» գործընկերը հանդիսացող OWEN-ի կողմից Բեռլինում անցկացված միջազգային համաժողովին մասնակցեցին նաև ՕՄՆԻԲՈՒՍ 1325 ցանցի անդամները: Համաժողովը նպատակ ուներ վերլուծելու ՄԱԿ-ի 1325 բանաձեւի իրականացման ամենատարբեր փորձերը, հասկանալու հակամարտության մեջ նախկինում կամ այժմ ներգրավված տարածաշրջաններում ժողովրդավարական հասարակություն կառուցման և Եվրոպական Միության ներազդեցության երկրներում ռազմական ու քաղաքացիական անձնակազմերի ուսուցման գործում խաղաղասիրական գործընթացներում ներգրավված տեղական դերակատարների կարիքները: Տես ավելին.

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=264&TopicId=5&Language=Arm

«Գենդեր և զենդերային իրավահավասարություն». Ուղիղ եթեր «ՄԻԳ-TV» հեռուստաալիքով (Ապրիլի 14, 2010)

Վանաձորի «ՄԻԳ-TV» հեռուստաալիքի «Մեր իրավունքները» հաղորդաշարի շրջանակներում կայացած «Գենդեր և զենդերային իրավահավասարություն» թեմայով հերթական հաղորդման հյուրն էր նաև «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության տնօրեն Էդգար Խաչատրյանը: «Մեր իրավունքները» հաղորդաշարը նպատակ ունի բարձրացնել Վանաձոր քաղաքի բնակիչների իրավագիտակցության մակարդակը մարդու իրավունքների վերաբերյալ՝ քաղաքացիների իրազեկման միջոցով: Ուղիղ եթերին հրավիրված հյուրերը, ծրագրի փորձագետների հետ համատեղ, փորձեցին հեռուստաալիքի հյուրերին ներկայացնել զենդերի

գաղափարը, նրա փոխկապակցվածությունը մարդու իրավունքների եւ ժողովրդավարության հետ, ազդեցությունը Հայաստանում ընթացող հասարակական եւ քաղաքական զարգացումների վրա: Է. Խաչատրյանն անդրադարձավ կանանց ոչ բավարար մասնակցությանը հակամարտությունների խաղաղ կարգավորմանն ուղղված որոշումների կայացման գործընթացներում՝ մատնանշելով, որ կանանց մասնակցությունն ապահովելու անհրաժեշտությունը շեշտող ՄԱԿ-ի 1325 բանաձեւն արժանացել է Հայաստանի, Ադրբեջանի եւ Միսսիսի խմբի համանախագահների կողմից ներկայացվող երկրների հավանությանը: Ավելին՝ http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=269&TopicId=5&Language=Arm

Ուսուցողական ճամփորդություն դեպի Բոսնիա եւ Հերցոգովինա (Հոկտեմբեր, 2010)

Օմնիբուս 1325 միջազգային խաղաղասիրական ցանցի անդամները Կովկասից ու Գերմանիայից 2010 թվականի հոկտեմբերին այցելեցին Բոսնիա եւ Հերցոգովինա եւ հանդիպեցին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, ովքեր աշխատում են այս հետկոնֆլիկտային երկրում խաղաղություն հաստատելու ուղղությամբ: «Ուսուցողական ճամփորդություն դեպի Բոսնիա եւ Հերցոգովինա» ծրագիրը, որի ընթացքում ցանցի անդամները հնարավորություն ունեցան հանդիպելու Բալկաններում գործող իրենց գործընկերներին, Բեռլինի OWEN հկ-ի նախաձեռնությունն է: Ծրագրի նպատակն էր խաղաղասիրական գործընթացներում կանանց եւ երիտասարդների ակտիվ մասնակցությունն ապահովելուն ուղղված երկխոսության ձեւավորումը Կովկասի, Գերմանիայի եւ Բոսնիա-Հերցոգովինայի քաղաքացիական հասարակությունների ներկայացուցիչների միջեւ՝ հաջողված փորձին, յուրացված դասերին եւ հետկոնֆլիկտային Բալկանյան տարածքում հանդիպած մարտահրավերներին ծանոթացնելու միջոցով: Մանրամասն՝ http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=327&TopicId=5&Language=Arm

«Հաղթահարել ճգնաժամերը, վերջ դնել զինված հակամարտություններին» թեմայով միջազգային համաժողով (Հոկտեմբեր, 2010)

ՄԱԿ-ի «Կանայք. խաղաղություն եւ անվտանգություն» վերտառությամբ թիվ 1325 բանաձեւի ընդունումից 10 տարի անց Հենրիխ Բյոլի հիմնադրամի Գունդա Վերներ ինստիտուտը, Կանանց անվտանգության գերմանական խորհրդի եւ «Աշխարհի կանայք՝ հանուն խաղաղության» (Peace Women Across the Globe) շարժման հետ համատեղ, կազմակերպեց «Հաղթահարել ճգնաժամերը, վերջ դնել զինված հակամարտություններին» թեմայով միջազգային համաժողով: Նպատակը՝ քննադատորեն դիտարկել բանաձեւի իրականացումն ու քննարկել, թե ինչքանով է այն համապատասխանում յուրաքանչյուր երկրի պայմաններին: Դոկտոր Մարինա Գրասսեն՝ գերմանական OWEN հկ-ից, եւ Էդգար Խաչատրյանը՝ վանաձորյան «Խաղաղության երկխոսությունից», ներկայացրեցին իրենց սեփական փորձը խաղաղասիրական կրթության եւ ակտիվիզմի բնագավառում՝ հիմնված ՕՄՆԻԲՈՒՄ 1325 միջազգային խաղաղասիրական ցանցի վրա, թեման՝ «1325-ը եւ տարբեր երկրների քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջեւ համագործակցությունն» էր: Ավելին.

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=317&TopicId=5&Language=Arm

Կոնֆլիկտից տուժածների շահերի պաշտպանություն

Իր այս ռազմավարական ուղղության շրջանակներում «Խաղաղության երկխոսությունը» հետամուտ է հակամարտությունից տուժած բոլոր խմբերի՝ փախստականների ու տեղահանվածների, պատերազմի մասնակիցների, ռազմագերիների, անհայտ կորածների եւ նրանց ընտանիքների շահերի պաշտպանությանը:

«Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» ֆիլմի դիտում-քննարկում (Օգոստոսի 2 եւ 27, 2010)

«Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության անդամ Վահագն Անտոնյանի, AzTV հեռուստաընկերության ռազմահայրենասիրական ծրագրերի բաժնի խմբագիր

Ասեֆ Գուլիեի հետ համատեղ, «Եվրասիա» հիմնադրամի աջակցությամբ նկարահանված, «Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» ֆիլմի դիտում-քննարկում կայացավ «Խաչվող ուղիներ» հասարակական կազմակերպությունում եւ «Զանգակ» սոցիալական ծառայությունների կենտրոնի պատանի լիդերների խմբի համար: Ֆիլմի, որում տեղ են գտել Հայաստանից եւ Ադրբեջանից երկուական հերոսների կողմից հակամարտության ընթացքում իրենց տեսածի ու ապրածի, ունեցած կորուստների ու պատերազմի մասին անցյալում եւ ներկայում ունեցած վերաբերմունքի մասին պատմությունները, դիտում-քննարկում կազմակերպելը նպատակ ունեւ քննարկման մասնակիցներին հնարավորություն տալ, ֆիլմը վերլուծելով, մտորել իրենց անձնական ընկալումների, դարաբաղյան հակամարտության իրենց կյանքի վրա ունեցած ազդեցությունների շուրջ: Առավել մանրամասն՝

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=293&TopicId=7&Language=Arm;

http://peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=305&TopicId=7&Language=Arm;

<http://vimeo.com/18781418>



7. ՔԱՂՎԱԾ ԴԱՍԵՐ

Կազմակերպությունն իր չորս հիմնական ռազմավարական ուղղություններով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում յուրացրել է հետևյալ դասերը.

§ «Խաղաղության երկխոսության» անձնակազմը ներգրավվել է մասնակցել է տարբեր միջազգային, տարածաշրջանային միջոցառումների կազմակերպմանը՝ նպատակաուղղված տարբեր խմբերին խաղաղասիրական գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ կարողություններ էլ գիտելիքներ մատուցելուն: Արդյունքում՝ մենք սովորեցինք, որ շատ հաճախ վերոնշյալ միջոցառումների ընթացքում ապահովված չէր լինում հենց հակամարտության «պատճառ» հանդիսացող տարածաշրջանների, օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի կամ Հարավային Օսեթիայի ներկայացուցիչների մասնակցությունը: Եզրակացությունն այն է, որ հետագա գործունեության ընթացքում «Խաղաղության երկխոսությունն» անպայման կներգրավի հակամարտություններում անմիջականորեն ներգրավված բոլոր կողմերի ներկայացուցիչներին:

§ Քաղաքացիական խաղաղասիրական ներուժի հզորացմանն ուղղված կրթական ծրագրերը սովորաբար չեն ապահովում այդ ծրագրի շարունակականությունը՝ մասնակիցներին սեփական նախաձեռնություններով հանդես գալու հնարավորություն ընձեռելով: Իր ծրագրերով «Խաղաղության երկխոսությունը» նպատակ ունի նպաստավոր

դաշտ ստեղծել մասնակիցների համար՝ միջոցառումից քաղած տեղեկատվության, գիտելիքների հիման վրա սեփական ծրագրեր մշակելու և իրականացնելու:

- § «Խաղաղության երկխոսության» գործունեության մեջ ներգրավված երիտասարդները շատ հաճախ խուսափում են քննարկել հատկապես քաղաքականությանը վերաբերող հարցեր: Նրանք այս հակակրանքը բացատրում են նրանով, որ ոչ մի օգուտ չեն տեսնում նմանատիպ քննարկումներում, որովհետև իրենք ի գորու չեն ոչինչ փոխել: Վերոնշյալից ելնելով, կարծում ենք, որ մինչ այս օգտագործվող մեթոդներն ու ճանապարհներն այնքան էլ արդյունավետ չեն եղել՝ կարծիքների բաց փոխանակության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու գործում: «Խաղաղության երկխոսությունը» ծրագրում է «լռության մշակույթը» հաղթահարելուն ուղղված այլընտրանքային գործիքներ կիրառել (ֆորում-թատրոն, Պատլո Ֆրեյրեի ազատագրման մանկավարժություն և այլն)՝ ժողովրդավարության պակասից «տառապող» հակամարտող երկրների ու տարածաշրջանների քաղաքացիների՝ սեփական պահանջմունքները բարձրաձայն արտահայտելու նպաստավոր պայմաններ ստեղծելու համար:
- § «Խաղաղության երկխոսության» գործունեության ընթացքում մենք ականատես եղանք ավագ սերնդի՝ երիտասարդների հանդեպ ունեցած անվստահությանը: Ավագ սերունդը չի ցանկանում հաշվի առնել երիտասարդության պահանջներն ու հետաքրքրությունները՝ դրանք համարելով անկարելի: Գործունեության հաջորդ ժամանակահատվածում

«Խաղաղության երկխոսությունը» էական կարեւորություն կտա ներգրավված հիմնական դերակատարների եւ ավագ սերնդի ներկայացուցիչների միջեւ երկխոսություն հաստատելուն:

- § Ըստ մեր դիտարկումների, հայ հասարակության մեջ եւ, ընդհանրապես, Կովկասում գենդերի հասկացությունը հաճախ աղավաղված է ընկալվում նույնիսկ այդ բնագավառի հայտնի մասնագետների եւ փորձագետների կողմից: Մարդիկ չեն տեսնում գենդերային հարցերի եւ խաղաղության կառուցման միջեւ եղած կապը: «Խաղաղության երկխոսությունը» մտադիր է նպաստել այս խնդրի լուծմանը՝ գենդերային կարծրատիպերի փոխակերպման ուղղությամբ աշխատանք ծավալելով:
- § Իր գործունեության ընթացքում «Խաղաղության երկխոսությունը» համոզվել է, որ հակամարտող կողմերի հասարակությունների, հասարակ ժողովուրդի մի փոքրիկ մասն է միայն տեղեկացված խաղաղասիրական կազմակերպությունների ծավալած գործունեությանը: Նրանք հիմնականում չեն գիտակցում այդ գործընթացներում սեփական ակտիվ ներգրավվածության անհրաժեշտությունը: Այդուհանդերձ, հաջորդ եզրակացությունն այն է, որ անհրաժեշտ է պատմել հասարակությանը (լրատվամիջոցների, կանոնավոր հանդիպումների միջոցով) նույնիսկ փոքրիկ ձեռքբերումների, ծառայած մարտահրավերների մասին՝ վստահություն ձեռք բերելու համար այն համայնքներում, որտեղ աշխատում ենք:
- § Խաղաղասիրական բնագավառում Կովկասում հսկայական անելիքներ կան. մինչ այժմ խաղաղասիրական գործունեությունը գլխավորապես կենտրոնացել

Եւ սահմանափակված է եղել փոքր խմբերի հետ տարվող աշխատանքներով, քան՝ միտված եղել դեպի հասարակության լայն շերտերը: Հասարակության մեջ խաղաղասիրական գործունեության պահանջարկի պակասի պատճառով այս խմբերը շատ քիչ հնարավորություն ունեն կիսելու իրենց փորձն այն համայնքներում, որտեղ ապրում են: Ելնելով նշվածից, մեր եզրակացությունն այն է, որ անհրաժեշտություն կա հասարակությանը նախապատրաստել հակամարտող երկրի ներկայացուցիչների հետ երկխոսությանը:





8. ՀԱԶՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔԱՅԼԵՐ

2011 թվականի համար «Խաղաղության երկխոսությունը» ծրագրել է ակտիվ գործունեություն ծավալել՝ իր «Տեսնենք՝ ով ենք մենք, ընտրենք՝ ով ենք ուզում լինել» ռազմավարության շրջանակներում: Այս տարվա համար «Խաղաղության երկխոսությունը» մտադիր է համայնքի երիտասարդության համար կազմակերպել մի քանի ուսուցողական դասընթացներ, որից հետո նրանք հնարավորություն կունենան պատրաստել եւ իրագործել իրենց սեփական խաղաղասիրական ծրագրերը: 2011 թվականին իրականացվելիք ծրագրերի մաս է կազմում նաեւ երիտասարդների ներգրավումը Հայաստանի կոնֆլիկտների խաղաղ կարգավորմանն ուղղված մի քանի քննարկումների կազմակերպման գործում, որոնք կանցկացվեն ավագ սերնդի (մասնակիցների ծնողների, համայնքի հկ-ների եւ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների) մասնակցությամբ: Հայ եւ միջազգային կամավորների աջակցությամբ «Խաղաղության երկխոսությունը» մտադիր է հզորացնել իր աշխատակազմն ու երիտասարդ հիմնական դերակատարներին՝ գործունեության առավել արդյունավետ կազմակերպման, կազմակերպության զարգացման համար: Իր գործունեության ընթացքում քաղած դասերը հիմք են դարձել «Խաղաղության երկխոսության» «Տեսնենք, ընտրենք, փոխենք» ծրագրի համար, որը կազմակերպությունը մտադիր է իրագործել հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում՝ հաջորդ տարում: Ծրագիրը ներառում է Վանաձորի երիտասարդների կարողությունների զարգացում՝ իրենց հասակակիցներին

խաղաղասիրական գործունեության մեջ ներգրավելու համար անհրաժեշտ մեթոդներին ծանոթացնելու միջոցով: Ինչպես նաև՝ ծրագրի մաս է կազմում նաև երիտասարդների խաղաղասիրական նախաձեռնություններին աջակցելը:





9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Caucasus Edition

Journal of Conflict Transformation

«ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ»

Իմ նկատառումների համաձայն, երբ դիտում ես հայկական նորություններն, առավել շատ կարելի է հանդիպել «Ադրբեջան», «Թուրքիա» բառերին, քան «Հայաստան», ընդ որում, հիմնականում՝ բացասական երանգներով եւ, որ ամենախնդրահարույցն է, գրեթե միշտ որպես նպատակ ունենալով հասարակության մեջ թշնամու կերպարն ավելի խորացնելը: Թշնամու կերպարի ձեւավորվումն, այնուամենայնիվ, չի սահմանափակվում միայն նորություններով կամ իշխանությունների կողմից վերահսկվող լրատվամիջոցներով:

Վերջին ամիսներին Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ ամեն օր մի տարօրինակ գովազդային հոլովակ է ցուցադրվում: Գովազդի նպատակը հեռուստադիտողին հորդորելն է գնել որոշակի կազմակերպության կաթնային

արտադրանքը, ինչն, ինքնատիինքյան, անսովոր բան չէ: Սակայն անսովորը դա անելու ձեւն է:

Պատկերացրեք, որ հեռուստաէկրանին տեսնում եք մի երիտասարդ պաշտոնյայի՝ իր ետեւում պատից կախված Թուրքիայի դրոշի ֆոնին: Տիրերը հուշում են, որ նա թուրքական շրջաններից մեկի պաշտոնական ներկայացուցիչն է: Կռահեք, թե ինչ է նա ասում: Թուրք պաշտոնյան իր խորին շնորհակալությունն է հայտնում հայ ժողովրդին, ով գնում է թուրքական արտադրանքն ու, այդպիսով, օգնում Թուրքիային հաղթահարել ֆինանսական ճգնաժամն ու հզորացնել իր բանակը:

Ցանկանալով որոշակիորեն պատկերացնել, թե ինչպիսի՞ աղոթություն է ունենում այս «կաթնային» գովազդը, սկսեցի հարցնել իմ հայ ընկերներին եւ գործընկերներին, թե ի՞նչ են նրանք մտածում այս գովազդի մասին: Մեծամասնության կարծիքով, այն բավականին զվարճալի է: Երբ հարցրեցի, թե ինչ են մտածում, արդյո՞ք դա իրական անձ է, որը Թուրքիան է ներկայացնում եւ ուղերձով դիմում է հայ հանրությանը, այստեղ արդեն կարծիքներն սկսեցին առանձնանալ: Որոշ մարդիկ մտածում էին, որ նա իրականում կառավարական պաշտոնատար անձ է, սակայն ոչ այնքան «կարեւոր», որը որոշակիորեն լիազորված է խոսել հայ հասարակության հետ: Մյուսների կարծիքով նա պարզապէս դերասան է, սակայն, հնարավոր է, ներկայացնում է Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը: Մի ուրիշ խումբ մտածում էր, որ սա պարզապէս

զվարճալի գովազդ է: Վերջապես, վերջին մի խումբն էլ ինձ ասաց. «Այո, նայել եմ. Այդ ի՞նչ գոռոզամիտ թուրք էր, որ հեզնում էր հայերին թուրքական բանակին աջակցելու համար: Նրանք ինչ է, ծաղրո՞ւմ են մեզ»: Ճանաչելով ընկերներին, չեմ կարող ասել, որ նրանք հիմար են. Նրանց մեծամասնությունը չափազանց կիրթ եւ բավականին լայն մտահորիզոնի տեր մարդիկ են, սկայն անգամ նրանց համար այնքան էլ պարզ չէր, թե ով էր այս մարդն իրականում: Ահա սա է թակարդը.

Շատ քչերը կփորձեն պարզել, թե արդյո՞ք հայ ժողովրդին դիմողն իրական անձնավորություն է Թուրքիայից, թե պարզապես դերասան, որն իր դերն է խաղում: Իսկ ամենակարեւորն ու ամենազարմանալին այստեղ այն է, որ «պաշտոնական ներկայացուցիչն» սկսում է խոսել թուրքական բանակի հզորացման մասին: Ընկերներս ասացին ինձ, որ նույն շարքից մեկ այլ գովազդային հոլովակ էլ կա, որում, այս անգամ արդեն, չինացին է դիմում հայերին: Չեմ տեսել վերջինը, սակայն հարցրեցի, չինացի՞ն էլ էր խոսում չինական բանակի հզորացման մասին, թե ոչ: Պատասխանը՝ ոչ: Ուրեմն, ի՞նչ է սա նշանակում: Իմ կարծիքով, հիմնական միտքը հետեւյալն է. «Հայեր, գնելով թուրքական արտադրանքը դուք օգնում եք ձեր թշնամուն, որպեսզի նա հզորացնի իր բանակն ու կովի ձեր դեմ»: Հնարավոր է, որ փոքր ինչ պարզեցված եմ ներկայացնում, սակայն, ըստ իս, տարբերությունը մեծ չէր լինի, եթե դրա փոխարեն կոչ արվեր գնել հայկական արտադրանքը, որպեսզի հզորացվեր հայկական բանակն ու կովել նույն Թուրքիայի դեմ, քանի որ երկու դեպքում էլ

գովազդը պատրաստողները շահագործում են ռազմական քարոզչությունն ու թշնամու կերպարը՝ իրենց արտադրանքը վաճառելու համար:

Այս օրինակը պարզ ցույց է տալիս, թե ինչպես են մեր լրատվամիջոցները մասը դառնում թշնամու կերպարի խորացման եւ դրա հետագա շահագործման գործընթացի: Իսկապես, մեր հասարակության համար վտանգավոր եւ համարում, երբ լրատվամիջոցները մասնակցում են թշնամու կերպարի ձեւավորմանը, այդ ձեւավորված կերպարի խորացմանն ու, այնուհետեւ, դրա շահագործմանը ինչ-ինչ նպատակներով: Մի միջոցն այն է, երբ նրանք բոլոր միջազգային նորությունները ներկայացնում են Հայաստանի ներգրավվածությամբ հակամարտությունների տեսանկյունից: Այս վտանգն առավել լավ է ընկալվում, երբ տեսնում ես, թե ինչքան հեշտ է իշխանությունների կողմից ստեղծված այդ թշնամու կերպարն արմատավորվում եւ խորանում մարդկանց ընկալումների մեջ, ամենակարեւորն՝ առանց որեւէ լուրջ ջանքերի, թեկուզ մասնավոր կազմակերպությունների՝ այդ թշնամու կերպարն ակտիվորեն շահագործելու միջոցով:

Մովորաբար գանգատվում ենք, որ մեր հասարակությունը հետաքրքրված չէ եւ չի աջակցում խաղաղասիրական նախաձեռնությունները: Սակայն դրա սկզբնապատճառներն ավելի պարզ են դառնում, երբ գիտակցում ես, որ այդ հասարակությունն ապրում է նման «գովազդներ» (եւ, իրոք, վայելում է դրանք,

քանի որ այնքան զվարճալի են), դրանք ստեղծող հեռուստատեսությունները դիտելով:

Էդգար Խաչատրյան

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ

Աղբյուր՝ <http://www.caucasusedition.net/>

Հավելված 2

**ՕՄՆԻԲՈՒՍ 1325-Ն ՈՒ ԻՐ «ՈՒՂԵՒՈՐՆԵՐԸ»**

Բնակելի տան առաջին հարկում գտնվող բնակարանի նեղլիկ սենյակներից մեկում խմբված երկու տասնյակ երիտասարդ աղջիկներն ու տղաները, զգուշավորությունը թաքցնել ձգտելով, զննում էին միմյանց՝ մինչ դասընթացավար Ազադը փոքրիկ գրատախտակին գրում էր հանդիպման թեման: Մի փոքր անց նա եւ մյուս դասընթացավարն՝ Ալբերտը, «Գենդերային իդեալներն ընտանիքում եւ հասարակության մեջ» աշխատանքային քննարկումն սկսեցին մասնակիցների հետ ծանոթությամբ. վրացի, հայ եւ ադրբեջանցի երիտասարդները կարդում էին միմյանց անունները՝ Սուրեն, Գիվի, Այնուրա, հետաքրքրությամբ լսում նրանց նշանակության մասին պատմությունները... Վրաստանի Մառնեուլ քաղաքում, «Վրաստանի ադրբեջանցի կանանց միություն» հասարակական կազմակերպության գրասենյակում ընթացող քննարկման կազմակերպիչը Ալլա Բեթենցեւան է: Նա է որպես դասընթացավարներ հրավիրել Ազադ Իսազադեին՝ Ադրբեջանից եւ Ալբերտ Ոսկանյանին՝ Լեռնային Ղարաբաղից:

Քվեմո-Քարթլին Վրաստանի տարածաշրջաններից մեկն է: Այստեղ բնակվող վրացիների եւ, տեղ-տեղ անգամ մեծամասնություն կազմող, ազգային փոքրամասնությունների՝ հայերի, ադրբեջանցիների միջեւ հարաբերությունները արտաքուստ հարթ են՝ չնայած բազում ներքին տարաձայնություններին:

«Քվեմո-Քարթլիում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրի շրջանակներում ամենախոցելի խմբերի՝ երիտասարդների եւ կանանց համար Բոլնիսում եւ Ալգեթիում կազմակերպված ակտիվացման թրենինգներին հրավիրվել են նաեւ նախկինում՝ Սաջիդան եւ Վաֆան, Ծալկայում՝ Սուսաննան. բոլոր այդ մարդկանց հետ ծանոթացել եմ գերմանական Օվեն կազմակերպության Օմնիբուս 1325 միջազգային խաղաղասիրական եռամյա դասընթացում 2006-2009թթ. ուսանելով», - ասում է «Վրաստանի ռուս կանանց միություն» հկ-ի նախագահ Ալլա Բեժենցեւան:

Սակայն դասընթացավարների «ամենայուրօրինակ» զույգն Ազադ Իսազադեն եւ Ալբերտ Ոսկանյանն են: Նախկին զինվորականներ, սպայական (համապատասխանաբար կապիտան եւ փոխգնդապետ) կոչումներով, որ անցել են Ղարաբաղյան պատերազմը՝ կռվելով հակառակորդ բանակներում, այժմ համագործակցում են, համատեղ դասավանդում եւ խաղաղասիրության են կոչում մյուսներին: Դեռեւս մի քանի տարի առաջ Ալբերտը եւ Ազադն էլ, թերեւս, բացառություն չէին կազմում՝ կիսելով իրենց հասարակություններում ընդունված

թշնամական վերաբերմունքը մյուս ազգի նկատմամբ: Մակայն վերջին մի քանի տարիների ընթացքում նրանց համար շատ բան է փոխվել, նաև շնորհիվ այն բանի, որ համատեղ եռամյա ուսուցում են անցել Օմնիբուս 1325-ի եռամյա դասընթացներում եւ ներկայում համանուն ցանցի անդամ են հանդիսանում:

«Ավտորուս գոյություն չունի՝...»

Ինչ է Օմնիբուս 1325-ը:

«Մա մի շարունակական ճանապարհորդություն, ուսուցողական գործընթաց է կանանց եւ տղամարդկանց մասին, նրանց հետ եւ նրանցից՝ իրենց կյանքի եւ իրականության, հայացքների, հեռանկարների, ցանկությունների, երազանքների եւ ոչ բռնի եղանակներով խաղաղության հասնելու հնարավորությունների վերաբերյալ», - այսպես պատկերավոր է Օմնիբուս 1325-ը նկարագրում Մարինա Գրասսեն, ում մտահղացմամբ է 2006-ին հիմնադրվել այն:

«Բաց՝ թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար, որոնք զբաղվում են գենդերային, կանանց խնդիրներով, հետաքրքրված են կոնֆլիկտների տրանսֆորմացիայի, մարդու իրավունքների հիմնախնդիրներով: Մասնակիցները, հիմնականում Հարավային եւ Հյուսիսային Կավկասից են, որտեղ էլ հենց պետք է օգտագործվեին ստացված գիտելիքները, մոտեցումը, որ երկխոսություն հնարավոր է, եւ հենց երկխոսության միջոցով է հնարավոր սովորել մեր եւ

«մյուսների» մասին», - այսպիսին էր, ըստ Մարինա Գրասսեի, հիմնական նպատակը:

«Շատերն են հարցնում, մի թե ավտոբուսն իրոք գոյություն ունի: Ո՛չ, չունի: Օմնիբուսն ընդամենը սիմվոլ է, նշանակում է՝ բոլորի համար», - ասում է Օվենի գիտաշխատող Դանա Ջիրոշը:

Մկիզբը

2006թ.-ին բազմաթիվ հայտերից ընտրության արդյունքում Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից, Աբխազիայից, Հրվ. Օսեթիայից, Լեռնային Ղարաբաղից, ՌԴ-ից, այդ թվում՝ Չեչնիայից, Դաղստանից, Նովոչերկասկից, երկու՝ Հարավային եւ Հյուսիսային ենթախմբերով անցկացվող նախնական կուրսերում ընտրված 60-ից ավելի մասնակիցներ ընդգրկվեցին: Դրանք հիմնականում զգայունակության բարձրացման կուրսեր էին, բարձրացնում էին ընկալունակությունը գենդերային հիմնախնդիրների նկատմամբ: Նախնական կուրսերի ավարտից հետո ակադեմիայի խորացված կուրսերում մնաց 20 մասնակից՝ խաղաղասիրական-կրթական գործունեությամբ զբաղվող, իրենց հասարակություններում որոշակի ազդեցություն ունեցող մարդիկ, որոնք կուրսերի ընթացքում ստացածը պետք է մուլտիպլիկացնեին իրենց հասարակություններում: Նույնանման առանձին կուրսեր կազմակերպվել են նաև Գերմանիայում՝ տեղական մակարդակով, տեղացիների եւ

փաքրամասնությունների միջև բազմաշերտ երկխոսություն ծավալելու նպատակով:

Ընթացքը

Ինչպես ամեն մի կոլեկտիվ, այստեղ էլ ամեն ինչ հարթ չէ ընթացել, մանավանդ, եթե հաշվի առնենք, թե էթնիկ, կրոնական, մշակութային առումով իրարից ինչքան տարբերվում էին խմբի անդամները: Եթե դրան ավելացնենք նաև այն, որ միմյանց հետ հակամարտություններում ներգրավված երկրներից էին՝ պատկերն առավել ամբողջական կլինի: Սակայն բոլորին միավորում էր Կովկասում խաղաղության հասնելու գաղափարը, իսկ բազմաթիվ հանդիպումները Վրաստանում, Սոչիում, Ստամբուլում, Տրաբզոնում, Բեռլինում, Պոտսդամում եւ այլուր, զրույցները, քննարկումները, տարիների ընթացքում համատեղ ուսուցումն ու շփումներն արեցին իրենց գործը:

«Երեւի հազարավոր պատմություններ ենք պատմել իրար, այդ թվում՝ նաև անչափ ցավոտ: Եղել են նաև արցունքներ, շատ անգամ, մարդիկ չէին դիմանում էմոցիոնալ ծանրաբեռնվածությանը», - ասում է Բաքվում կանանց ճգնաժամային կենտրոնի հոգեբան, էքսպերտ Ազադ Իսազադեն, - «Երբ կռվում էի Ղարաբաղում, 90-ականներին, երբեւէ չէի կարող մտածել անգամ, որ կգա մի ժամանակ, երբ ոչ միայն կհամագործակցենք Ալբերտի հետ, այլ նաև ընկերներ կլինենք: Սակայն

այժմ հպարտությամբ կարող եմ ասել, որ մենք բոլորս ընկերներ ենք այդ բառի իսկական իմաստով»:

Ալբերտի եւ Ազադի “ունիկալ դուետը”

«Ալբերտի եւ Ազադի դուետն ունիկալ է», - ասում է Ալլա Բեժենցեւան, - «նախկին կոմպոզիտորներն իրենք են խաղաղություն քարոզում: Ինձ համար խաղաղասիրական գործունեության ամենալավ արդյունքն էր, երբ աշխատանքային քննարկումից հետո երկու վրաստանաբնակ ադրբեջանցի երիտասարդ աղջիկներ մոտեցան Ալբերտին եւ ասացին. «Մենք չգիտեինք, որ հայերն այդպես լավն են»: Ճիշտ է, նրանք ապրում են հայերի հետ կողք կողքի, բայց Ալբերտն “ուրիշ” հայ է, նա դարաբաղի է»:

«Մենք չենք ամաչում իրար աչքերի նայել, քանի որ պատերազմի ընթացքում անգամ ոչինչ չենք արել, որ ամաչենք: Ալբերտն, օրինակ, զբաղվել է անհայտ կորածների եւ պատանդների ետվերադարձմամբ», - ասում է Ազադ Իսազադեն:

«Այժմ մենք իրար հետ այնպիսի կատակներ կարող ենք թույլ տալ, որ անգամ ամենալավ ընկերները ոչ միշտ կարող են թույլ տալ միմյանց նկատմամբ: Ընդհանուր շատ բան ունենք. Հասակակիցներ ենք, մեծացել ենք նույն քաղաքում՝ Բաքվում, գրեթե նույն թաղամասում, ընդհանուր ծանոթներ ունենք:

Հակառակորդներ ենք եղել պատերազմի ընթացքում, սակայն, ինչքան էլ որ տարօրինակ հնչի, անգամ դա է մեզ միավորում», - ասում է Ալբերտ Ոսկանյանը:

Որն է առանձնահատկությունը

Օմնիբուսի ակադեմիական եռամյա կուրսերում դասավանդման մեթոդները, մոտեցումները տարբերվում էր մինչ այդ ընդունվածներից: Հիմք էր ընդունվում Գելլտադտ մեթոդոլոգիան, կիրառվում էին Պաոլո Ֆրեյրեի մոտեցումները: Հիմնականում Հարավային Ամերիկայում ընդունված եւ կիրառվող դասավանդման մեթոդիկայի հիմքում ընկած էր այն պարզ պատկերացումը, որ ոչ մի մարդ դատարկ չէ եւ ունի իր կյանքի փորձը, կարող է եւ սովորել, եւ սովորեցնել, անգամ` իր թրեյներին:

«Ողջ կրթական գործընթացը երկխոսությունների վրա էր հիմնված, - դասընթացի մասնակիցներից մեկը` «Խաղաղության երկխոսություն» հկ-ի նախագահ Էդգար Խաչատրյանն է ասում, - “Որոշ ժամանակ անց, աստիճանաբար սկսեցի հասկանալ, որ հենց դա է երկխոսությունը, երբ մենք ամենքս զարգացման մեջ մեր սեփական ներդրումն ենք ունենում եւ սովորում միմյանցից»:

«Եթե պատերազմից հետո գենդերի եւ խաղաղության հարցերով զբաղվում էինք հոգու կանչով, ապա ակադեմիայում սովորելը համակարգեց այն, ինչ զգում էինք, տվեց ավելի հստակ պատկերացում խնդրո առարկայի վերաբերյալ: Միասին

սովորելով, ապրելով, հնարավորություն տվեց փնտրելու», - սա Ազադ Բսազադեի բնորոշումն է:

Նախկինում էլ որպես թրեներներ աշխատող ցանցի մասնակիցները կուրսն անցնելուց հետո հիմնականում վերանայել են իրենց մանկավարժական, մեթոդական մոտեցումները, գիտակցել մինչ այդ թույլ տված սխալներն ու թերությունները եւ այժմ ձգտում են կիրառել ստացած գիտելիքներն իրենց ամենօրյա աշխատանքում:

«Օմնիբուսն ազատ մտածելու հնարավորություն է ինձ համար. Այն ոչ թե աբստրակտ գիտելիքներ տվեց, այլ ամենօրյա աշխատանքն ավելի լավ անելու հնարավորություն, գործիքներ՝ ինքնաճանաչման համար», - նշում է Է. Խաչատրյանը:

08.08.08. Ճգնաժամ

Թե՛ ներքին, թե՛ արտաքին դժվարությունները, դժվար պահերն անխուսափելի եղան նաեւ Օմնիբուս 1325-ի համար: Բոլորի համար շրջադարձային էր 2008-ի օգոստոսի 8-ից, Հարավային Օսեթիայում ռուս-վրացական պատերազմից հետո առաջին հանդիպումը: Գրեթե բոլոր մասնակիցները, որպես ամենաձանր շրջան նշեցին այդ օրը: Յուրաքանչյուրը դեմ էր պատերազմին, ցանկանում էին մեկ ձայնով խոսել, դատապարտել պատերազմը, միացյալ պրես-ռեզոլյուցիոն հրապարակել:

Սակայն Օսեթիայից, Վրաստանից, ՌԴ-ից մարդիկ տարբեր պատկերացում ունենին կատարվողի վերաբերյալ, նաև, թե ինչ բառերով պետք է գրված լիներ:

«Իրավիճակն այնպիսին էր, որ մեծ հիասթափություն էինք զգում, թվում էր, որ ոչ մի բան չստացվեց, ձախողվեց ամենը եւ սա վերջն է», - վերհիշում է Բարեկրովսկան:

«Ես շատ ծանր ժամանակաշրջան էի ապրում: Օգոստոս ամսին պայթող ռումբերի ձայնը դեռ չէր մարել, ռուսական զորքերը դեռ Վրաստանում էին: Երկեւ երկրների քարոզչությունը առաջնորդում էին երկու ժողովուրդներին էլ եռանդուն հակամարտության: Շատ դժվար հանդիպում էր նախատեսվում, ծանր քննարկումից խուսափելն անհնար էր: Զգացմունքային բացառիկ լարման պայմաններում ամեն ինչ դուրս հորդեց՝ արցունքների հետ մեկտեղ: Ես անսպասելիորեն այնպիսի տաքություն եւ աջակցություն ստացա, մանավանդ գերմանացի մասնակիցների կողմից...»,- վերհիշում է Ալլա Գամախարիան՝ Քութայիսիի «Սուխումի» հիմնադրամից:

Այն ժամանակ իրավիճակը տարածաշրջանում այնքան էր լարված, որ չէր բացառվում անգամ հայ-ադրբեջանական նոր հակամարտության սկիզբը:

«Քննարկման ժամանակ, շիկացած մթնոլորտում, մինչ այդ լուռ մտածումների մեջ գտնվող ադրբեջանցի Վաֆան հանկարծ ցատկեց եւ ճչաց. «բայց ես չե՛մ

ուզում կորցնել ընկերներին...», այնքան բնական, այնքան մտահոգված, որ ես, հիշում եմ, զգացի, որ նա իրոք ընկեր է, ում հետ կարելի է ընկերություն անել», - ասում է Է. Խաչատրյանը եւ շարունակում, - «դա ստիպեց մտածել, որ այդ մարդկանց հետ ոչ թե գործնական հարաբերություններ են միայն կապում, այլ նրանք գրեթե հարազատ են ինձ, եւ, որ ես էլ նույնն են զգում` չեմ ուզում կորցնել ընկերներին: Ադրբեջանի հասարակությունն ինձ համար ոչ թե արտարկտ ինչ-որ մի բան է, թշնամի, այլ առաջին ասոցիացիան իմ ընկերներն են ու չեմ կարողանում այդ հասարակությանը, որում նաեւ իրենք են, նայել որպէս թշնամի հասարակության»:

Օմնիբրուսն առանց իր լոկոմոտիվի` OWEN-ի

2009-ին ծրագիրն ավարտվելուց հետո կուրսերի մասնակիցները որոշում կայացրեցին շարունակել համատեղ աշխատանքը` միասին հիմնադրելով Օմնիբրուս 1325 միջազգային խաղաղասիրական ցանցը: Վերջինս ոչ թե հկ-ների, այլ անհատների միություն է, անհատական է, հիմնված ընկերության, փոխվստահության, մի խումբ մարդկանց միություն է, որոնք, ինչպես նշում է Օմնիբրուսի հիմնական ոգեւորողը` Մարինա Գրասսեն, «երազանք ունեն խաղաղության մեջ ապրելու եւ այդ հարցում զգում են նաեւ իրենց պատասխանատվությունը»:

«Բոլորս մոտ անհանգստություն կար, թե առանց Գերմանիայից նյութական աջակցության ինչպես է լինելու, քանի որ դասընթացի ծրագիրն արդեն ավարտվել էր», - ասում է Իոաննա Բարեկոնվսկան:

Սակայն բոլոր մասնակիցների մոտ էլ իրար հետ աշխատելու, համագործակցությունը շարունակելու ցանկություն գտնվեց. Միաձայն որոշվեց շարունակել համատեղ գործունեությունը:

«Դա բոլորիս հաջողությունն է, որ ցանցը շարունակում է գոյատևել եւ արդյունավետ աշխատել անգամ առանց իր լոկոմոտիվի` OWEN-ի», - շարունակում է Իոաննան, - «ցանցի առանձնահատկությունն է, որ մասնակիցներն իրար այնքան են վստահում, որ պատրաստ են ինքնակամ համագործակցել, առանց որեւէ աջակցության: Ես դրանով շատ-շատ եմ հպարտանում: Բոլորս կարող ենք դրանով հպարտանալ»:

Ներկան. Բազմակողմանի համագործակցային կապեր

Օմնիբուս 1325 միջազգային խաղաղասիրական ցանցի մասնակիցներն այժմ ակտիվորեն աշխատում են իրենց երկրներում:

«2006-ին Լեոնային Ղարաբաղում գենդեր բառը թերեւս ոչ-ոք չէր լսել: Մեր կազմակերպությունն արդեն մեկ տարի է, ինչ ակտիվորեն աշխատում է այդ

ուղղությամբ: Ձգտելու ենք, որ մեծանա կանանց դերը Ղարաբաղի հասարակական կյանքում, կանացի ռեսուրսն օգտագործվի խաղաղասիրական նպատակներով, որ կարողանան պաշտպանել իրենց իրավունքներն ու մասնակցեն պետության կայացման գործին», - ասում է Ալբերտ Ոսկանյանը, Լեռնային Ղարաբաղում գործող «Քաղաքացիական նախաձեռնությունների» կենտրոնի ղեկավարը:

Չնայած սահմաններին եւ չնայած հակամարտություններին, բազմակողմանի են նաեւ համագործակցային կապերը միմյանց միջեւ: Ցանցի անդամները զգում են միմյանց կարիքը, Մ. Գրասսեի բնութագրմամբ, ոչ այն պատճառով, որ թույլ են եւ միայնակ, այլ, որ կարելի է բոլորի պոտենցիալն օգտագործելով՝ հասնել ավելի մեծ հաջողությունների:

Բացի Ազադից, Ալբերտից, Սուսաննայից, Սաջիդայից, Վաֆայից, Ալլայից համագործակցության այլ օրինակները եւս շատ են. Ազադ Իսազադեն համագործակցում է Չեչնիայում կանանց «Մինտեմ» կենտրոնի աշխատակից Իննա Հայրապետյանի հետ: Նրանք աջակցում են միմյանց խորհուրդներով, փորձի եւ ինֆորմացիայի փոխանակման ակտիվ գործընթաց է գնում նրանց միջեւ: Օմնիբուսի գերմանական դասընթացի մասնակից Ինգա Լուրերը համագործակցում է Լատինական Ամերիկայի իր կոլեգաների հետ: Միմյանց միջեւ համագործակցում են նաեւ Ալլա Գամախարիան եւ Վալենտինա Չերեւատենկոն («Դոնի կանայք» ՌԴ), Մարինան եւ Էդգարը եւ նրանց

ներկայացրած կազմակերպությունները՝ OWEN-ն ու «Խաղաղության երկխոսությունը», եւ այլն: Ցանցի անդամները նաեւ ինտենսիվ նամակագրական կապի մեջ են, գրեթե ամեն օր իրար հետ տեղեկատվություն են փոխանակում, նորությունները իմանում միմյանցից:

Վերջաբան. Ապագան

Դժվարությունների գնով հիմնադրված եւ իր առաջին քայլերն անող 5-ամյա ցանցի ապագայի մասին բնութագրերից ամենապատկերավորը, թերեւս, Ալլա Բեժենցեւային է պատկանում. «Օմնիբուսը մի կրծքի երեխա է, որը դեռ իր առաջին քայլերն է կատարում: Առայժմ՝ ճիշտ քայլերը: Սակայն երբեք չգիտես, թե ինչ նա կդառնա ապագայում: Նրան լավ ընկերներ են պետք, լավ դպրոց պետք է գնա եւ մեկուսացված չլինի»:

Վահագն Անտոնյան

Աղբյուր՝ <http://www.visionews.net/>

Լուսանկարները՝

Արտակ Օհանյանի,
Վահագն Անտոնյանի,
Մովսես Պողոսյանի,
Դավիթ Շեկոյանի,
Հրայր Ղուլինյանի,
Ստեֆան Ռոհելլի
Էդգար Խաչատրյանի

© «Խաղաղության երկխոսություն» ՀԿ
ՀՀ, 2001, ք. Վանաձոր; Տիգրան Մեծի 71, բն. 1;
Հեռ.՝ +374 322 4 60 59

Վանաձոր, 2011